

ՈՒՐԻՆԸ ՇԷՅՔԱՓԻՐԻՆ

Իր ծննդեան 400ամեակի ոգեկոչումին առթիւ

Քու խօսքերուդ, խոհերուդ, չըքեղութեամբն երազիդ,
Հնչեակներուդ սիրազեղ ներգաշնութեամբ հուզմայլ,
— Որով ըսիր մարդկային բարդ ապրումներն անայլայլ,
Պիտի երգել ուղէի քեզ, մե՛ծ հանճար ու մե՛ծ սիրտ:

Ո՛րքան անգոր են, Ուրեմա՛մ, զոյները քեզ նըկարող,
Դուն խորազգած յոյզերու փոթորկաշո՛ւնչ ուղիւնս...:
Երկնականա՛ր երազի՛ լոյս ու մութով յարափոխ,
Եւ մարդկային կիրքերու դէմ կոթողուած լո՛յս փարոս...:

Դուն ռազմազա՛շտ հողեկան՝ ուր մարտադու կը բացուին
Բընազդներուն ախտաւոր ճակատումները դաժան,
Ուր յոյսն ու սէր կ'արիւնին Չարին դէնքով զայրազին,
Ուր նախանձը, ոխն ու սուտ՝ կը մարտընէին անբաժան...:

Ուր Ռոմէոն սիրակէզ, ասպետակա՛ն սիրահար,
Կամ Ժիւլիէթն ու Օֆելիան՝ սոխակներո՛ւ խօսակից,
Եղեմական ապրումով կը յուզեն կեանքն ու աշխարհ,
Տեղեմանան դեռ կու լայ կարապի երդն իր անբիծ...:

Ուրեմա՛մ, պայծառ հայելի՛ ներանձնական ցոլքերու
Ուր մարդկութիւնը կու դայ ճանչնալ խորշերն իր սրտին,
Կու դայ ճայնիդ մէջ լսել խիղճին ուղղած խօսքդ աղբու,
Նայել կեանքին ու մահուան՝ քու աչքերով անձկազին...:

Պիտի սահի՛ ժամանակն, հիմնայատա՛կ տապալին՝
Կեղծ փառքերու, կուռքերու կաւարձանները շինծու,
Տփույն Համլէթը սակայն, իր «ըլլալու-չըլլալու»
Հարցականով մի՛շտ ցնցէ խիղճն ու խոհեր մարդկային...:

Փարիզ, 1964

ՄԱՌԻ ԱՌՄԱՃԵԱՆ

ՎԵՐԱԳՈՐԶ

Նուէր ողբ. Հ. Եղիա Վ. Փէշիկեանի յիշատակին

Հեռուներէն վերադարձայ այս հողին,
Ինչպէս չառեր՝ յաջողեցայ վերջապէս
Անցնիլ զօտին աստուածամերժ կրկէսին,
Հիմա կրնամ նորէն կեանքիս տալ հանդէս:

Այ ազատ եմ ճշմարտը տեսնելու,
Ճակատս բարձր, հողիս հըպարտ՝ բայց հըլու
Մեր հաւատքին ցուցմունքներուն անսըխալ
Կրնամ խաչիս յաղթանակին հոչակ տալ:

Այ ազատ եմ, նորէն խաչին լոյսին տակ,
Եւ իբրեւ հայ պիտ'ունենամ նըպատակ
Տալ իմ աղբիս ժիր աշխատանք ու հողիս,
Արդէն կը զղամ ամբողջ հըրաշքն աղօթքիս:

Ողջո՛յն ձեզի ազատ երկինք ու արեւ,
Վերադարձ իմ վերապրում մ'է զերդ պարզեւ,
Տիրոջ կամքը տըւաւ ինձի կեանք մը նոր
Որ ես երգեմ փառքը լոյսին միշտ հըլո՛ր:

Ողջո՛յն կու տամ մեր հարազատ պերճ հողին
Սուրբ Ղազարու լուսացնցուղ կղզեակին.
Հայոց ազգին տիրաններուն արիւնէն՝
Արեւ խըմած կղզի՛ օրհնեալ երկնքէն:

Վերադարձի համբո՛յր ձեզի շիրիմներ,
Ես քարերուն կու տամ համբոյր սրտազեղ,
Համբո՛յր հողին որ ապաստան է տըւեր
Հայ բարբառին մըշակներուն հանճարեղ:

Վերադարձիս ու նոր կեանքիս զերդ իմաստ,
Գրիչս իմ ահա՛ պիտի ըլլայ միշտ ըզգաստ.
Պիտի երգեմ խաղաղութեան կուռ մատեան,
Խօսքը բարի՛ ազատութեան յաղթական:

Միլան, 1964

Մ. ՄԵՍՅԵԼԻ